

ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ՄԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ընդհանուր դրույթներ

Մարտական դիրքը ցանկացած վայրն է, որն օգնում է պատսպարվել, քողարկվել, ինչպես նաև հնարավորություն է տալիս մարտիկին պատրաստել իր զենքը: Մարտական դիրքերը տատանվում են բնական պատսպարանի անձեռնմխելի հատվածներից մինչև ինժեներական ստորաբաժանումների կողմից կառուցված ժամանակավոր դիրքեր:

Ցանկացած մարտական դիրք պետք է ունենա ճակատային պաշտպանություն, որը կարող է դիմակայել հրաձգային զենքի կրակին և արկերի բեկորներին: Սա առնվազն 46 սմ հաստությամբ սեղմված հողի շերտ է, ամուր ծառերի բներ կամ 75 տոկոսով լցված ավազով պարկեր:

Ճակատային պաշտպանությունը պետք է լինի մարտիկի գլխից վեր («կանգնած» դիրքում) և պետք է բավականին հեռու լինի խրամատից, որպեսզի արմունկները հենվեն պարապետի վրա և սեկտորային նշաձողերի դասավորության տեղերում: Այն պետք է լինի նաև բավականաչափ երկար, որպեսզի հրազենի փողային բոցը քողարկվի առջևում գտնվող հակառակորդից, երբ մարտիկը իր դիրքից շեղածից կրակ է վարում:

Ուղիղ խրամատը նախընտրելի է, երբ ճակատային հատվածը պաշտպանված է հարևան դիրքերով:

Իդեալում, մարտական դիրքը պետք է ունենա նաև կողային ու ետնամասային ծածկույթ, ինչպես նաև թաքստոց գազաթափար կրակից՝ ճակատային պաշտպանությանը հավասար դիմացկունությամբ: Օդային պայթեցմամբ հակահետևակային զինամթերքից պաշտպանվելու համար առաջարկվում է գազաթափար կրակի թաքստոցը պատրաստել գերաններից, թիթեղներից կամ տախտակներից, այնուհետև ծածկել հողի և սաղարթների հաստ շերտով, իսկ երբեմն էլ ջրամեկուսիչ պլաստիկ թիթեղներով: Բոլոր մարտական դիրքերը հնարավորինս պետք է քողարկվեն բնա-

կան, տեղանքում գտնվող նյութերի միջոցներով, նույնիսկ ավելի լավ է, եթե մարտական դիրքը սարքավորվի բնական ծածկույթի հետևում:

Բոլոր դեպքերում մարտական դիրքերը պետք է պարբերաբար ստուգվեն, հատկապես կլիմայական փոփոխություններից հետո: Հորդառատ անձրևը կամ սառնամանիքը կարող են վնասել խրամատների և բլինդաժների պատերը, իսկ ջերմաստիճանի անսպասելի փոփոխությունները փոխում են շրջակա միջավայրի սաղարթը:

Մարտական դիրքերի սարկապատումը կախված է նաև օպերատիվ պահանջների և սահմանափակումների փոփոխությունից:

Եթե ժամանակը թույլ է տալիս, ապա խրամատը պետք է փորել մինչև թևատակերի մակարդակի խորությամբ և մի քանի մետր երկարությամբ: Օրինակ՝ ԱՄՆ բանակում առաջարկվում է խրամատը փորել M16A2/M16A4 հրացանի առնվազն երկու երկարությամբ: Դիրքի յուրաքանչյուր ծայրում փորվում է մեկական նոնակորսիչ խրամատ: Սրանք նեղ փոսեր են, որոնք ուղղաձիգ են մոտ 0,75-1,5 մ խորությամբ կամ առնվազն շանցե գործիքի¹ երկարությամբ: Նոնակը խրամատ ընկնելու դեպքում, մարտիկը կարող է պարզապես գլորել կամ ոտքով հրել այն այդպիսի խրամատներից մեկի մեջ, որտեղ պայթյունի հիմնական ուժն ու բեկորները կկլանվեն հողում: Դիրքի հատակը պետք է թեքություն ունենա իր կենտրոնից դեպի յուրաքանչյուր նոնակորսիչ խրամատ: Խրամատի եզրին, ճակատային պաշտպանությունից այն կողմ, մարտիկը պետք է փորի երկու հենարան արմունկների համար: Արմունկների համար նախատեսված հենարանները մեծացնում են կրակի ճշգրտությունը: Եթե դիրքում զենք է տեղադրվում երկձողանի հենակների վրա, ապա վերջինիս ոտքերի համար նեղ ակոսը ծառայում է նույն նպատակին:

Ցանկացած դիրքում հրաձիգը պետք է նշի գնդակոծման հատվածներն ու տեղամասերը: Սրանք այն տեղամասերն են, որոնց վրա հրաձիգը թիրախավորում է իր զենքը և կրակ է վարում, դրանց գծանշումն անհրաժեշտ է, որպեսզի խուսափեն յուրային դիրքերին կրակելուց կամ այլ դիրքերից կրակի անհարկի կրկնությունից: Գնդակոծության երկու հատված կա, որոնք հայտնի են որպես առաջնային և երկրորդային: Առաջնային հատվածը տարածվում է խրամատի յուրաքանչյուր անկյունից շեղագիծ ակյանը և կրակը վարվում է ճակատային թաքստոցի եզրից այն կողմ: Կարող է տարօրինակ թվալ, որ առաջնային կրակային դիրքը տեղակայված չէ ուղիղ ճակատայի երկայնքով: Այնուամենայնիվ, շեղագիծ նշանառությամբ կրակը խոցում է թշնամուն անսպասելի անկյունից, ինչպես նաև այլ կրակային դիրքերի հետ միասին ապահովում է պաշտպանող կրակ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանացի գնդացրորդները հայտնաբերեցին, որ խրամատային համակարգի հակառակ թևերում գնդացիներ տեղադրելով ստեղծում են լայնությամբ երկու կոնաձև կրակի հատված, որոնք համընկնելով միմյանց հետ ծանր կորուստներ են պատճառում բաց տարածքում իրենց առջև գտնվող հակառակորդին: Նման կրակը կարող է խորքային վնաս հասցնել ավելի մեծ չափով, քան ճակատային ուղիղ կրակը:

Երկրորդային հատվածը այն գոտին է, որը գտնվում է անմիջապես դիրքի դիմաց: Գնդակոծումը կատարվում է ճակատային պաշտպանության պատճառով

¹ **Շանցե գործիքը** (գերմ. Schanze «խրամատ, ամրացում») ձեռքի գործիք է ինժեներական աշխատանքներ կատարելու համար, որը նախատեսված է գորամասերի հաստիքացուցակներով: Այն ներառում է սակրավորի մեծ բահ, կացին (ատաղձագործական կացին), լինգ, քլունգ սղոց և այլ գործիքներ: [Шанцевый инструмент](#)

անկյան տակ դուրս հանված հրաձգային զենքից: Իր կրակային կարգապահությունն ուժեղացնելու համար մարտիկը յուրաքանչյուր կրակային դիրքի ճակատի դիմաց նշագծում է առաջնային հատվածները՝ գետնին խրելով երկու ցցիկներ, որոնք հայտնի են որպես սեկտորային ցցիկներ (նշաձողեր) անվամբ: Այս ցցերի միջև հեռավորությունը նշում է կրակելիս հրաձգային զենքի շարժման սահմանները և կանխում է յուրային դիրքերին կրակելուց կամ այլ դիրքերից կրակի անհարկի կրկնությունից: Որոշ հրաձիգներ սեկտորային ցցերի միջև տեղադրում են նաև նշանառման նշաձողեր (прицельная вешка), որն օգնում է ինքնաձիգի նշանահատիկը և ուղղանը (мушка и целик) դեփտասնեռել թիրախով:

Կրակային դիրքի բնույթը փոխվում է՝ կախված դրա սարքավորումների արագությունից, մարդկանց քանակից և դրանում տեղակայված զենքի տեսակից:

Չսարքավորված մարտական դիրք

Չսարքավորված մարտական դիրքն օգտագործվում է այն դեպքերում, երբ ժամանակ չկա ավելի բարդ կառույց սարքավորելու համար... Սա կարող է լինել ցանկացած ամուր բնական ապաստան, ինչպիսին է ընկած ծառի բունը կամ լերկ ժայռի կտորները: Սակայն չսարքավորված դիրքը չի բացառում նաև խրամատների փորումը: Խրամատը փորվում է մինչև 50 սմ խորությամբ, իսկ փորված հողը դրվում է առջևում՝ լրացուցիչ ճակատային պաշտպանություն ստեղծելու համար:

1945 թվականի փետրվարին Ճապոնական Իվոձիմա կղզու վրա հարձակման ժամանակ ԱՄՆ ծովային հետևակայինները նկատեցին, որ ափը ամբողջությամբ բաղկացած է փխրուն, սև, հրաբխային ավազից: Այս ավազի մեջ փորված ցանկացած խրամատ փլուզվում էր, երբ հասնում էր մեկ մետրից ավելի խորության: Ավելին, կղզու հրաբխային ակտիվությունը նշանակում էր, որ ցանկացած անհատական խրամատ տաքանում էր և լցվում ծծմբային գազով, ինչը ստիպում էր մարտիկներին լքել այն: Մինչդեռ Ճապոնացիները ավեզրին կառուցեցին ճկուն ամրացված դիրքեր՝ օգտագործելով քարեր և գերաններ: Արդյունքում մեծ թվով ամերիկացի զինվորներ զոհվեցին ցամաքի և ծովի սահմանին:

Անհատական մարտական դիրք

Անհատական դիրքն իր չափերով բավարար է մեկ մարտիկին իր ամբողջական հանդերձանքով տեղավորելու համար: Այն պետք է թույլ տա նրան հեշտությամբ փոխել գնդակոծման առաջնային հատվածները՝ լինելով պաշտպանված ճակատային կրակից: Այս տեսակի դիրքը սովորաբար մի փոքր ավելի երկարացված խրամատ է և տարածվում է ճակատային պաշտպանությունից այն կողմ, քան մյուս դիրքերը, որպեսզի հրաձիգին ընձեռնվի երկրորդական հատվածում կրակելու ավելի մեծ հնարավորություն:

Կրակային դիրք երկու անձի համար

Երկու հոգու համար նախատեսված կրակային դիրքը պետք է համեմատաբար մեծ լինի, որպեսզի ամբողջական մարտական հանդերձանքով տեղավորի երկու հրաձիգի: Բայց այն, միևնույն ժամանակ, պետք է հնարավորիս փոքր լինի, այնքան փոքր, որ կառուցանա պաշտպանել նոնակի, ականի, հրետանային և օդային պայթյունից առաջացած արկի բեկորների, հրաձգային զենքերի հավանական հարվածվից: Խրամատը ճակատային պաշտպանության երկայնքով կարող է փորվել ուղիղ կամ կորագծով, որպեսզի յուրաքանչյուր մարտիկի համար ապահովի կրակի ավելի լայն առաջնային հատվածներ և բարելավի ճակատի երկայնքով հակառակորդի գործողությունները դիտարկելու հնարավորությունը: Երկու անձի դիրքը սովորաբար

պետք է մեջնամասում ունենա մեկ նոնակորսիչ խրամատ, ուստի դիրքի հատակը դիրքի երկու ծայրերից պետք է թեքված լինի դեպի կենտրոն:


Մարտական դիրք երեք հոգու համար

Երեք հոգու մարտական դիրքը «Т» ձև տեսքով է, որտեղ յուրաքանչյուր մարտիկ զբաղեցնում է «Т»-ի եզրերից մեկը: Նոնակորսիչ խրամատը գտնվում է «Т» խաչարդի (крестовина) կենտրոնում: Երեք անձի դիրքը ապահովում է 360 աստիճանի կրակ վարելու հնարավորություն, այդ իսկ պատճառով մարտիկները պետք է շատ հստակ տեղադրեն իրենց սեկտորային ցցերը, որպեսզի խուսափեն յուրայինների վրա կրակելուց:

Վերը թվարկված դիրքերի բոլոր երեք տեսակները կարող են հարմարեցվել տարբեր տեսակի զենքերի համար: Գնդացիների դիրքերը սովորաբար ունենում են հատուկ հարթակներ հողից, որոնց վրա էլ գնդացիները տեղադրվում են խրամատում: Ականանետային դիրքերը սարքավորված են օղակաձև խրամատում, ինչը հեշտացնում է անձնակազմի տեղաշարժը զենքի շուրջը: Հակատանկային հրթիռների դիրքերը պահանջում են, որ հողը մաքրվի դիրքի առջևի և հետևի աղբից, որպեսզի նվազեցվի այս տեսակի զենքից կրակի արդյունքում բարձրացված փոշու քանակը:

ԱԹՄ-ների հարվածներից խրամուղիների պաշտպանությունը

Վերջին շրջանում ԱԹՄ-ները, այդ թվում FPV դրոնները մեծ տարածում են գտել: Առավել մատչելի FPV դրոններից մի քանիսը կիրառվում են ինչպես զրահատեխնիկան, այնպես էլ կենդանի ուժը ոչնչացնելու համար: Բաց խրամուղիներում (խրամատներում) այդպիսի հարձակումներից խուսափելը գործնականում անհնար է, ինչի մասին է վկայում ռուս-ուկրաինական հակամարտության երկու կողմերից արձանագրված բազմաթիվ տեսանյութեր: Իհարկե խրամուղիների (խրամատների) պաշտպանությունը նախատեսված չէ ուղղակի հարձակումներն ամբողջությամբ արգելափակելու համար, սակայն այն կարող է դժվարացնել դրանցում շարժվող անձնակազմի տեսողական դիտարկումը: Այսպիսով, հակառակորդի համար ավելի կդժվարանա ճշգրիտ հարվածներ հասցնելու հնարավորությունը, ինչը կարող է փրկել մարդկային կայանքեր: Ուստի առաջարկվում է խրամուղիները (խրամատները) սարքավորել ծածկելով այն 14 մ բջիջ ունեցող, ապակեպլաստե 6-8 մ ամրանից պատրաստված շրջանակներով, կապերով, քողարկման ցանցով և այլ հնարավոր միջոցներով:





Մարտական դիրքերի կայունությունը մեծապես կախված է պաշտպանությունում գտնվող հետևակայինների հմուտ գործողություններից

Իսկ որո՞նք են հաջողության հիմքերը: Պաշտպանությունում գտնվող հետևակի հաջողության հիմքը պլանավորումն է: Պաշտպանության տեղամասում (մինչև 5 կմ խորությամբ) նախապես անհրաժեշտ է նախանշել պլանային կողմնորոշիչները: Այդ պլանային կողմնորոշիչները պետք է լինեն վառ արտահայտված և լավ դիտարկելի դրոններից (կամ այլ ԱԹՄ-ներից) և ցամաքից: Օրինակ՝ ճանապարհների խաչմերուկներ, անտառատնկարաններ, առանձին շինություններ և այլն: Այդպիսի կողմնորոշիչների քանակը պարտադիր չէ, որ մեծաթիվ լինեն: Գումարտակի պաշտպանության գոտում 8-10 կողմնորոշիչներ լիովին բավարար են :

Այդ կողմնորոշիչներով տրվում է հրետանու նպատականշման հրամանը, օրինակ՝ «Նշանակետից 112 հյուսիս 400 արևելք 250 տանկ 3 ՀՄՄ, հետևակային խումբ: Մեկ արկ, կրակ»: Տարածքի այս օբյեկտները անպայմանորեն պետք է նշված լինեն սկսած վաշտի հրամանատարից մինչև բրիգադի հրամանատար, ինչպես նաև դրոնների օպերատորների, հրետանային և հետախուզական ստորաբաժանումների հրամանատարների քարտեզների վրա (ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային հավելվածներում): Մազգալիորեն արագացնում է հրետանու կրակի կանչը, քան թվային կոորդինատային արժեքների փոխանցումը: Եթե պաշտպանական ճակատի դիմաց կան դաշտեր, որոնք իրարից առանձնացված են անտառատնկարաններով, ապա պետք է համարակալել անտառատնկարանները՝ դրանք բաժանելով հատվածների: Նպատականշումը կարող է տրվել հետևյալ կերպ. «16-րդ և 21-րդ գոտիների խաչմերուկից արևելք 550 ԻՀԿ: Մեկ արկ կրակ»:

Բացի այդ, անհրաժեշտ է հրետանավորների հետ համաձայնեցված հրետանային խափանիչ կրակ (կրակապատնեշ) պլանավորել ճակատի դիմաց և պաշտպանական դիրքերի միջև ընկած հատվածում անձնակազմից ոչ ավելի, քան 400 մ հեռավորության վրա: Մազատ կարևոր է: Խափանիչ կրակը (կրակապատնեշը) անհրաժեշտ է հետևակը հակառակորդի զրահատեխնիկայից կտրելու համար՝ դրանով իսկ սահմանափակ տեսադաշտով զրահատեխնիկան թողնելով առանց նոսականետորդների կրակի պաշտպանությունից :

Պաշտպանվող հետևակի «աշխատանքի» հիմնական սկզբունքներից է «որքան մոտ է հակառակորդը, այնքան բարձր է ցանկացած տեսակի սպառազինության կրակի խտությունն ու ինտենսիվությունը»: Այսպես, աջ ափին պաշտպանական մարտերի ընթացքում հակառակորդը, օգտվելով մատախուղից, հարձակման է անցել մի հատվածում, որտեղ նախկինում իր կողմից հարձակման փորձեր չեն եղել և զարգացրել է հաջողություն: Այդ դեպքում հնարավոր է դանդաղեցնել նրա առաջխա-

դացումը, եթե, գոնե տեխնիկայի գվվոցի ուղղությամբ վարվի հաճախաձիգ կրակ խափանիչ կրակի տարածքներում:

Հիշե՛ք. միայն գրագետ պլանավորված կրակային խոցումը կապահովի պաշտպանության կայունությունը:

Բացի վերը նկարագրված հիմքերից, պաշտպանությունում հետևակի հաջող գործողությունների համար կարևոր նշանակություն ունեն ևս երկու կարևոր գործոններ՝ կապի ճիշտ կազմակերպումը և դիրքերի ճիշտ սարքավորումը:

✓ **Կապ**

Գումարտակում անհրաժեշտ թվով ռադիոկայանների առկայության դեպքում անհրաժեշտ է ունենալ կառավարման 2 կապուղի. ընդհանուր՝ գումարտակի բոլոր ստորաբաժանումների և առանձին՝ ձեր ակնանետային մարտկոցը և օժանդակակող հրետանային ստորաբաժանումները կառավարելու համար:

Բրիգադը պետք է ունենա նաև բրիգադի հրետանային ստորաբաժանումների և օժանդակող հրետանային ստորաբաժանումները կառավարելու կապուղի:

Երբ շատ բաժանորդներ մարտի առավել սուր պահերին նույն կապուղում են, եթերը խցանվում է և տեղեկատվության ու հրամանների փոխանցման ժամանակը մեծանում է, կարող է առաջանալ շփոթություն:

✓ **Դիրքերի ամրաշինական սարքավորման հաջորդականությունը**

Ամրաշինական կառույցների ստեղծումը հեշտ գործ չէ: Այն իրականացվում է որոշակի հաջորդականությամբ:

Առաջին հերթին

Առաջին ժամվա ընթացքում ջոկի հրամանատարը, ավտոմատավորները, գնդացրորդը, նոնականետորդն ու նրա օգնականը փորում են սկզբնական ծավալի խրամատներ: Մեխանիկ-վարորդը և ՀՄՄ-ի նշանառու-օպերատորը քողարկում են մեքենան և սկսում դրա համար խրամատի փորումը:

Խրամատները սարքավորելուց հետո ջոկի հրամանատարը, ավտոմատավորները և նոնականետորդի օգնականը, կրակային միջոցի պաշտպանիչ հատկությունները արագ բարձրացնելու նպատակով, օգնում են վարորդ-մեխանիկին և նշանառու-օպերատորին ՀՄՄ խրամատը սարքավորելուն:

Երկրորդ հերթին

Երկրորդ և երրորդ ժամվա ընթացքում գնդացրորդը ու նոնականետորդը ավարտում են հիմնական դիրքում խրամատների սարքավորումը և սկսում են խրամատներ փորել պահեստային դիրքում, իսկ մնացածը սարքավորում են ՀՄՄ-ի խրամատը:

Չորրորդ ժամվա ընթացքում ջոկի հրամանատարը, ավտոմատավորը և նոնականետորդի օգնականը խրամատներ են սարքավորում հիմնական դիրքում, գնդացրորդը ու նոնականետորդը՝ կեղծ խրամատներ ջոկի անձնակազմի համար, իսկ մեխանիկ – վարորդը և նշանառու -օպերատորը՝ կեղծ խրամատ ՀՄՄ-ի համար:

Հետագայում

Ութերորդ ժամվա ավարտին հիմնական դիրքում սարքավորվում են խմբային խրամատներ՝ խրամատներ անձնակազմի և պահեստային դիրքում խրամատ ՀՄՄ-ի համար:

Օրվա ավարտին ստեղծվում են խմբային խրամատներ և պահեստային դիրքում ՀՄՄ-ի խրամատ: Անձնակազմի համար կեղծ խրամատների թիվն ավելանում է 2-3 անգամ :

Հարթվայրային տեղանքում նույնիսկ աննշան բարձրություններն ու իջեցվածքները (անհարթությունները) մեծ տարածքում ստեղծում են չգնդակոծվող («մեռյալ») գոտիներ, իսկ բարձր խոտածածկույթը կարող է զգալիորեն փակել առջևում գտնվող տեղանքի տեսադաշտն ու գնդակոծությունը: Հետևաբար, հարթավայրային (տափաստանային) տեղանքում դիրքեր սարքավորելիս անձնակազմի համար խրամատները կառուցվում են մինչև 30 սմ բարձրացված հրակնատով (бойница) և մինչև 60 սմ բրուսովերով:

Ստորերկրյա ջրերի բարձր մակարդակ ունեցող տեղանքում կառուցվում են կիսաթաղված կամ մակերեսային (լցնովի) տիպի կառույցներ, որոնք փորվում են այնպիսի խորության վրա, որ հատակը ստորերկրյա ջրերի մակարդակից 15-20 սմ բարձր լինի: Բրուսովերը կամ լցված հողը վերցվում է կառույցի անմիջական հարևանությամբ:

Անտառում, արմատների մեծ քանակի պատճառով, խրամատները և խրամուղիները սովորաբար կառուցվում են մակերեսային, բարձրացված բրուսովերով:

Լեռներում և քարքարոտ հողերում խրամատները և խրամուղիները կառուցվում են առնվազն 30 սմ հաստությամբ քարից պատրաստված բրուսովերով: Փափուկ հողի առկայության դեպքում խրամատները և խրամուղիները փորվում են հնարավոր խորությամբ՝ լրացնելով փակման բարձրությունը քարերից պատրաստված բրուսովերով: Քարի բեկորների թոփչքը նվազեցնելու և անձնակազմը վնասվածքներից պաշտպանելու համար բրուսովերը ծածկվում է առնվազն 20 սմ հաստությամբ հողով:

Ձմռանը, երբ ձյան շերտը կազմում է մինչև 50 սմ, խրամատները սարքավորվում են մասամբ կամ ամբողջությամբ գետնին, իսկ ձյունը օգտագործվում է միայն քողարկման համար: Ձյան ավելի բարձր շերտի առկայության դեպքում խրամատները սարքավորվում են ամբողջությամբ ձյան մեջ՝ բրուսովերի առաջնամասում ունենալով առնվազն 2 մ հաստությամբ սեղմված ձյուն:

Մինչև 60 սմ խորությամբ սառած հողը փխրեցվում է պայթուցիկ նյութի (200 գ զանգվածով) լիցքի կենտրոնացված պայթյունով, որոնք տեղակայվում են սառած հողի հաստության 0,75 խորության հետախուզահորերում (в шурфак) և վերջինիս մեկուկես խորությանը հավասար առանցքի երկայնքով հեռավորությամբ:

Սերժանտներն անձամբ են կազմակերպում ամրաշինական սարքավորումները և քողարկումը ջոկի, հաշվարկի, անձնակազմի տեղակայման վայրում և դեկավարում են այս առաջադրանքի կատարումը:

II-ձև խրամուղիների հատվածներ

Խրամուղիներ ոչ մի դեպքում չպետք է հավասար լինեն: Նրանց տարածական հատվածները պետք է ձևավորվեն կոտրտված գծի, զառիկող զիգզագների տեսքով: Դա անհրաժեշտ է երկու պատճառով:


- Եթե արկը, ականանետի ականը, նոնակը ընկնի խրամուղու մեջ, բեկորները կթռչեն բաց անցուղիներով: Եթե մեծ տարածականությունում նրանց գիծը հարթ լինի, ապա հզոր բեկորները կարող են խոցել ավելի շատ մարտիկների, ինչը անընդունելի է: Կոտրտված կոնֆիգուրացիայի դեպքում բեկորները կանցնեն կարճ հատված և կբխվեն հողային զանգվածին:

- Եթե մեծ տարածականությունում խրամուղին հարթ լինի, ապա հակառակորդի գրոհային ուժերի ներթափանցման դեպքում, նա կարող է մեկ կրակահերթով ոչնչացնել անընդմեջ կանգնած բոլոր մարտիկներին, ովքեր չեն նկատել դեպի իրենց

թները կատարված ճեղքումը: Կոտրված կառուցվածքի դեպքում ավելի հեշտ է պաշտպանվել, թաքնվել անկյունների հետևում:

Խրամուղիների տարածականության գծի երկայնքով մի քանի Պ-ձև հատվածների ձևավորումը բավականին օգտակար տեխնիկական հնարք է: Այս միջոցը անհրաժեշտ է այն դեպքում, երբ հակառակորդը ներխուժի ձեր խրամուղիները, թներից մեկում:

Այսպիսի Պ-ձև հատվածի կողային մասերում փորվում և տեղադրվում են ձեռքի նոնակների արկղեր: Մարտիկները, հակառակորդի ճնշման տակ նահանջելով, արկղներից վերցնում են նոնակները, անցնում են Պ-ձև հատվածի մյուս կողմը և սկսում են ելուստի վրայով հակառակորդի վրա նետել նոնակները: Ընդ որում, պետք չէ կռահել, թե ուր պետք է նետել, քանի որ խրամուղիները համառանցքային են (соосны):



Հակառակորդի կողմից հրաձգային զենքի կիրառումը արդյունավետ չէ, քանզի հողային զանգվածը պաշտպանում է զինվորներին: Միայն այն դեպքում, երբ մարտը սկսվի բրուստվերի վրա պետք է հաշվի առնել արդեն թե ով ում կվերախաղարկի: Մա վերահսկամ ենթակա գործողություն է:

Նյութերը [Unfair Advantage](#) կայքից